

«Հ Գեղարքունիքի մարզի Շորժա համայնքի ղեկավարի 2011 թ.-ի ընթացքում կատարած աշխատանքների

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

2011թ-ը Շորժայի գյուղապետարանը ավարտել է( ինչպես և անցած տարիները) դրական արդյունքներով; Կատարվել և գերակատարվել է 2011թ.-ի համայնքային բյուջեով նախատեսվող հարկերի, տուրքերի, վարձավճարների, ոչ հարկային եկամուտների , ինչպես նաև այլ վճարների հավաքագրումը համայնքային բյուջե:

Համայնքային վարչական բյուջե

նախատեսված 12906.0 դրամի փոխարեն հավաքագրվել է 142343.0դրամ: Ֆոնդային բյուջեով նախատեսած 5000000 դրամի փոխարեն հավաքագրվել է 5626450 դրամ : Ընդհանուր առմամբ համայնքի վարչական բյուջեն կատարվել է 110 %-ով`նախորդ տարվա 100,7%-ի փոխարեն, այդ թվում` գույքահարկ 38.3%, հողի հարկ 155%, հողի վարձավճար183%`ընդ որում նշված գումարի ընդամենը 7% -ն է հավաքագրվել համայնքի բնակիչներից,մնացածը հավաքագրվել է այլ կազմակերպություններից:

Համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունների շրջանակներում 2011թ.-ի ընթացքում կատարվել են համայնքի համար կարևոր նշանակություն ունեցող մի շարք գործառույթներ.

1.Քաղաքաշինության բնագավառում օրենքով սահմանված կարգով շարունակվում է համայնքի գլխավոր հատակագծի կազմման աշխատանքները, այն դեռևս ընթացքի մեջ է և շուտով նախագիծը կներկայացվի կառավարության հաստատմանը: Ավարտվել են համայնքի հասցեավորման` փողոցների և տների համարակալման և ցուցանակների տեղադրման աշխատանքները: Բնակարաններ կառուցելու նպատակով համագյուղացիներին են տրամադրվել հողամասեր, պարզեցված եղանակով համագյուղացիների համար կազմվել են քաղաքաշինական փաստաթղթեր, սահմանված կարգով տրամադրվել են շինթույլտվություններ: 2011թ. կառուցվել է բնակելի շենքի 250 գմ երկարությամբ նոր կոյուղագիծ `իր սեպտիկ հորով: Մշակվել է հանրապետական նշանակության ավտոճանապարհների եզրերին կառուցվելիք շինությունների նախագծերը և ի գիտություն բնակիչների ` փակցվել մատչելի վայրում : Համայնքում 2011 թվականի հոկտեմբերի 12-21 –ը Հայաստանի Հանրապետությունում անցկացվող հերթական մարդահամարը անց է կացվել բարձր մակարդակով,որի համար համայնքը արժանացել է խրախուսանքի:

2.Գյուղատնտեսության բնագավառում կատարվել է դրական տեղաշարժ: Ապահովվել է գարնանացանի, աշնանացանի և բերքահավաքի աշխատանքների անխափան և անկորուստ ընթացքը: Գյուղացիներին զեղչ գներով տրամադրվել է գյուղտեխնիկա: Հացահատիկային կուլտուրաների մշակությունը խթանելու նպատակով շահագրգիռ գյուղացիներին է տրամադրվել 10 տ գարու սերմացու:Նախկինում կատարված 110 հա աշնանացանից ստացվել է 1 հա-ի հաշվարկով միջինը`1.8տ հացահատիկ:Հաջողությամբ հավաքագրվել և պետությանն է հանձնվել նախկինում վերցրված հացահատիկի սերմ վարկը`ընդամենը 52 տ:

26 տ-ի փոխարեն:ժամանակին հավաքագրվել և պետությանն է հանձնվել նաև գարու սերմացուի արժեքը,որը կազմել է 700000 դրամ: Ընթացիկ տարում համայնքի համար զեղչ գներով / 4 մլն դրամ/ ձեռք է բերվել նաև հանրապետություն ներկրված 61 ՄՏՁ 82 մակնիշի տրակտորներից `մեկը:Համայնքում անասնապահությունը խթանելու նպատակով «Հ Գյուղնախարարության ԾԻԳ ՊՀ –ի հետ համատեղ իրականացվել և դեռևս ընթացքի մեջ է Շորժա համայնքի արոտավայրերում ջրարբիացման համար մոտ 3310 մ ջրագծի վերակառուցման, 3 հատ խնոցների տեղադրման , մեկ ջրընդունիչի վերակառուցման աշխատանքների ծրագիրը, որը իր մեջ ներառում է նաև 1 հատ ՄՏՁ 82 տարակտորի ,1 հատ գութանի, 1 հատ խոտհնձիչի, 1 հատ կուլտիվատորի, 1 հատ հակավորող սարքավորման ձեռք բերումը,ինչպես նաև 50 հա բազմամյա խոտաբույսերի ցանքսի կատարումը:Վերը

նշված ծրագրի շինարարական մասի իրականացման համար համայնքի կողմից կատարվել է 2մլն.200հազ դրամ ներդրում,որը կազմել է ընդհանուր ծավալի 5տոկոսը: Գյուղտեխնիկայի ձեռք բերման և 50 հա գարնանացանի աշխատանքների կատարման համար համայնքի կողմից ներդրումը կազմելու է ընդհանուր արժեքի 20 տոկոսը:Վերոհիշյալ ծրագիրը իրականացնելու նպատակով Շորժա համայնքում ստեղծվել է «Շորժա համայնքի արոտօգտագործողների միավորում » սպառողական կոոպերատիվը, որի մեջ ընդգրկված է համայնքի 150 արոտօգտագործողներ:2011թվականի ըթացքում համայնքիղեկավար նախաձեռնությամբ և ակտիվ աջակցությամբ համայնքի վարչական տարածքում գյուղացիների կողմից կառուցվել են 3 խոշոր ոչխարաբուծական ֆերմաներ: Հայտարարվել են գյուղատնտեսական նշանակության հողամասերի աճուրդներ և վարձակալության մրցույթներ:Մատուցվում են բարձրորակ անասնաբուծական ծառայություններ:

3. Զգալի աշխատանքներ են իրականացվել կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում : Կրթության նախարարության ԾԻԳ ՊՀ-ի հետ համատեղ համայնքի համաֆինանսավորմամբ իրականացվել է Շորժա համայնքի նախակրթարանի կապիտալ վերանորոգման և բարձրորակ գույքով կահավորման աշխատանքները:Արդյունքում համայնքի 12 երեխա 2011-2012ուստարվա սկզբից մեծ հաճույքով հաճախում է արդեն բարեկարգ նախակրթարան:Արդեն ավանդույթ դարձած` կապիտալ վերանորոգվել է նաև Շորժա գյուղի միջնակարգ դպրոցի մեկ դասարան:Որպես ներդրում համայնքը ծրագրի իրականացմանը տրամադրել է 1մլն 350հազ. դրամ` շինարարական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև ֆինանսավորել է մեկ դաստիարակի մեկ տարվա հաստիքը,որը կազմել է 540000դրամ:Ծրագրի իրականացմանը աջակցել է նաև ՄԱԿ-ի Երևանյան գրասենյակի ՀՊԾ-ն, որը սնունդ աշխատանքի դիմաց տրամադրել է այլուր և բուսական յուղ,որը բախշվել է շինարարությունն իրականացրած բանվորներին: Համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ և հովանավորությամբ կազմակերպվել են հանրապետության տարբեր քաղաքներից եկած համերգային խմբերի ելույթներ, ինչպես նաև մայրաքաղաքի մշակութային օջախներ են այցելել համայնքի բնակիչներից կազմված խմբեր:Գեղարքունիքի մարզպետարանի և Շորժայի գյուղապետարանի նախաձեռնությամբ ԼՂՀ –ի Մարտունու շրջանի դպրոցների առաջավոր աշակերտների մի խումբ`թվով 19 մարդ է հրավիրվել Շորժա : Այստեղ կազմակերպվել է նրանց 10 օրյա ամառային հանգիստը: Իրականացվել է են տարաբնույթ ուղևորություն մայրաքաղաքի տեսարժան վայրեր` այդ թվում Եղեռնի զոհերի հուշարձան, Եռաբլուր,Հնարապետության հրապարակ: Ծրագրի վերջում գյուղապետարանի աշխատակազմի և Շորժա գյուղի միջնակարգ դպրոցի տնօրենության առաջնորդությամբ ԼՂՀ-ից եկած աշակերտները կատարել են ուխտագնացություն Սյար աթոռ Ս. Էջմիածին:

ՀՀ Նկարիչների միության Շորժայի ստեղծագործական հանգստյան տունը 2011թվականի ամառային շրջանի նախապատրաստվելուն օժանդակելու համար Շորժա համայնքի ղեկավարը արժանացել է Նկարիչների միության պատվոգրին:

4.Ուշադրության կենտրոնում է եղել նաև աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառը: Համայնքում 2011 թվականի ընթացքում ստեղծվել է մոտ 50 ժամանակավոր աշխատատեղ:Համայնքում տարիներ շարունակ իրականացվում է երիտասարդ ընտանիքներին ծննդաբերության խրախուսման ծրագիրը: Այդ կապակցությամբ համայնքի կողմից յուրաքանչյուր նոր ծնված երեխայի ծնողներին է տրվում 100 դոլարին համարժեք դրամ:Ընդհանուր առմամբ 2011թ –ին այս ծրագրից օգտվել են 14 ընտանիք: Համայնքի սոցիալապես առավել անապահով հաշմանդան երեք ընտանիքների տրվել է դրամական օգնություն, որը կազմել է 220500 դրամ:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին և վերջին կազմակերպվում են տոնական արարողություններ՝ նվիրված՝ Գիտության օրվան և վերջին դասին, երեխաներին են տրվել գրենական պիտույքների փաթեթներ, իսկ Ամանորի հանդիսությունների ժամանակ համայնքի բոլոր մանուկները ստացել են Ձմեռ պապի ավանդական նվերներ: Գյուղապետարանի աշխատակիցների ավագանու անդամների և համայնքի հեղինակավոր անդամների մասնակցությամբ կազմակերպվել է ամանորյա հանդես, ճաշկերույթ և հրավառություն:

Բարձրագույն և այլ ուսումնական հաստատություններում սովորող թվով 4 ուսանողի ուսման տարեկան վարձի վճարումը իրականացվել է գյուղապետարանի կողմից :

Համայնքի ղեկավարի գործուն մասնակցությամբ Արծվաշենից բռնի տեղահանված 120 համագյուղացիներ ընդգրկվել են ՀՀ Կառավարության կողմից տրամադրվելիք փոխհատուցման ցուցակում, որը 1 անձի համար կազմում է 360000 դրամ: Ընդհանուր առմամբ գյուղացիները կստանան 43200000 դրամ փոխհատուցում:

5.Տարեցտարի բարելավվում են բնակչության կոմունալ –կենցաղային պայմանները, կատարվում է կոմունալ ենթակառուցների թարմացում: 2011թ.-ին կատարվել են նոր ջրագծի կառուցման 1700զմ հատվածի շինարարական աշխատանքներ: Մասնակի վերանորոգվել են գյուղը սնուցող ջրագծերը: Ձեռք է բերվել նոր խորքային պոմպ, իսկ շարքից դուրս եկած նախկին խորքային պոմպը ուղարկվել է վերանորոգման Ջրամատակարարման հետ կապված բոլոր ծախսերը (էլ. էներգիա , տրանսպորտ, վերանորոգում, համակարգի սպասարկում և այլն ) իրականացվում է անվճար, որի վրա գյուղապետարանը ծախսել է 1.7 մլն դրամ: Համայնքում անվճար իրականացվում է մասնակի աղբահանում : Համայնքը 90% -ով զազաֆիկացված է : 2010թ . աշնանային անձրևներից և 2011թ. գարնանային հեղեղումներից հետո համայնքի փողոցներում կատարվել են խճալցման և ուղեհարթեցման աշխատանքներ, ուղեհարթվել և արդյունքում անցանելի են դարձել մի քանի դաշտամիջյան ճանապարհներ:

6. Պաշտպանության բնագավառում ինչպես նախորդ տարիներին 2011թ.-ին նույնպես կատարվել է 100% -անոց զորակոչ :

7. 2011թ ընթացքում հրավիրվել է ավագանու 7 նիստ, որտեղ քննարկվել են համայնքային նշանակության տարբեր հարցեր և կայացվել է համապատասխան 18 որոշում: 2010թ. համայնքի ղեկավարի կողմից կայացվել է 15 որոշում: Վերը նշված որոշումները, ինչպես նաև բոլոր տեսակի հաշվետվությունները սահմանված կարգով և ժամանակին ներկայցվել են Գեղարքունիքի մարզպետարանի համապատասխան բաժիններ:

Յուրաքանչյուր երկուշաբթի , չորեքշաբթի և ուրբաթ օրերին կատարվել է քաղաքացիների ընդունելություն : Ընդունելությունների ընթացքում քաղաքացիների կողմից բարձրացված հարցերին տրվել են սպառիչ պատասխաններ, առաջարկվել ընդունելի լուծումներ:

